№ 16 ԿԻՐԱԿԻ, 24 ՅՈՒՆՎԱՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 24 ՅՈՒՆՎԱՐԻ № 16

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողաւորին 10 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 228

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ռ., 10 ամսվանը՝ 9 ռ., 9 ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., 7 և 6 ամսվանը՝ 6 ռ., 5 ամսվանը՝ 5 ռ., 4 ամսվանը՝ 4 ռ., 3 ամսվանը՝ 3 ռ., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Փառանձէմ և Խոսրով Արզումանեանները և Աստղիկ Թովմասեանը յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջինը իր թանգագին եղբօր, երկրորդը ներորդու, իսկ երրորդը տագր՝

Աբգար Իսահակեան ԹՈՎՄԱՍԵԱՆՑԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ յունվարի 23-ին, երեկոյեան ժամը 6½-ին։ Ամփոփը այսօր, երեկոյեան ժամը 6-ին (Սերգէյևսկայա № 14)։ Յուղարկաւորութիւնը վաղը, երկուշաբթի, յունվարի 25-ին, առաւօտեան ժամը 10½-ին դէպի Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։

Յ. ՉԻԳԻԱՆԵԱՆ պատիւ ունի ծանուցանել, որ նա ունի ընդհանուր առևտրական և ֆինանսական յանձնարարական գրասենեակ Լօնդօնում և յարգանօք խնդրում է դիմել իրան, նրանց, որոնք կը ցանկանան ունենալ գործակալ կամ ներկայացուցիչ անգլիական հրապարակների վրա։

Կարևոր է համարում յիշել, իբրև վկայական, որ նա յընթացս երկար տարիների եղած է գլխաւոր կառավարիչ Նաւթարդիւնաբերական և Առևտրական Տան

„Ա. Ի. ՄԱՆԹԱՇԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“ ԼՕՆԴՕՆՈՒՄ

Նախապէս հաստատելով և աջողութեամբ կառավարելով զանազան ճիւղեր նոյն Տան, Արևելքում։

Թղթակցութիւններ հայերէն, ռուսերէն և եւրոպական բոլոր լեզուներով։
Հասցէն՝ O. Tchighianoff. 59, MARK LANF, LONDON, E. C.
Հեռագրական հասցէն՝ KARMOUT LONDON
(17,21,24,28, փ. 2) (առ.) 62. 5—3

ՊԱՀՊԱՆԵՑԷՔ ԶԵԶ ԽԱԲԵԲԱՅՈՒԹԻՒՆԻՑ

ԻՆՁՈՒ վճարել 10 հատի համար 5 կ., երբ կարելի է այդ գնով կրկնակի քանակութեամբ ունենալ լաւագոյն պապիրոսներ

„ДРУЖБА“ и „ТОВАРИЩЪ“

20 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.

Գերազանց յատկութեան գեղեցիկ փաստ ծառայում է այն հանգամանքը, որ նրանց արդէն սկսել են կեղծել. ուստի գնելիս զգոյշ եղէք և առանձին ուշադրութիւն դարձրէք ֆաբրիկային մարկայի և ֆիրմայի վրա։

Ն. Ի. ԲՕԶԱՐՋԻԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

(կ.) (առ.) 19. 5—4

!ԹՏԱՊԵՑԷՔ ՏԵՍՆԵԼ!

Էլեկտրօ-թատրօն „ԱՊՕԼԼՕ“

Միքայէլեան փողոց, № 129.

Յունվարի 26-ին, 27-ին և 28-ին միայն այդ թատրոնում

ՑՈՅՑ ԿԸ ՏՐՎԵՆ

I. ՄԱՏԹԷՈՍ II ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՈՒՄԸ
II. ԶՈՒԱՐԹՆՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ
III. ԱՆԻԻ ԱՒԵՐԱԿՆԵՐԸ

Եւ ուրիշ հետաքրքրաշարժ պատկերներ։

Սկիզբը երեկոյեան ժամը 6-ին։

(կ. ե.) (առ.) 92. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

Ժողովրդ. ներկայաց. կազմակերպող ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻՍ

Կիրակի, յունվարի 24-ին

Հայոց Դրամ. Ընկ. թատերասէրների խումբը կը ներկայացնէ

I

ՀԵՂԵՂ

Դրամա 3 գ. հեղ. Մաքս Հալբէի, թարգմ. Ալիխանեանի

II

ԷՍ ԷԼ ԲԻ ՄՈՅԻԲԼՈՒԹԻՆ

Վոդեվիլ 1 գ. հեղ. Մ. Տէր-Դրիգորեանի

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան

Տեղերի գնները 50 ից մինչև 5 կոպէկ

Բէժիսսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ

առ. 91. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Ն. Ս. ՕՐԷՄԲՕՎՍԿԻ

Կոկորդի, բքի և ականջի հիւանդութիւններ։

Ընդունելութիւնը ամեն օր՝ երեկ. ժամը 4—7-ը։ Պետրոս Մեծի փողոց, № 26, գեներալ-նահանգապետի պիւանասան դիմաց։

(Ե. հ. կ.) (առ.) 1217. 11—10

ԲԺԻՇԿ

Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.

Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.

Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.

(Ե. հ. կ.) (առ.) 1045. 100—50

Թիֆլիսի Ժողովարան

Այսօր, կիրակի, յունվարի 24-ին տեղի կունենայ

Ընտանեկան երեկոյթ

ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ ԳԻՏԻ-ԷՆԷ

Հիւրերը մուտքի համար վճարում են 1 ռուբլի։

Երեկոյթի սկիզբը երեկ. ժամը 9-ին։

(առ) 90. 1—1

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՕՆՈՒՄ

Երկուշաբթի, յունվարի 25-ին

Հայ Դերասանական Ընկերակցութիւնը

կը ներկայացնէ՝

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

Աւետիք Անարոնեանի նոր պիէսը

ՈՒԽՏՎԱԾՆԵՐ

3 գործ. (4 պատկեր)

և

ՅՕԲԵԼԵԱՆ

Վոդ. 1 գործ., Ա. Շէյսոյի

Մասնակցում է ամբողջ խումբը։

Տեղերի գինը բարձրացված է։

Սկիզբն ուղիղ ժամը 8-ին։

«Ուխտվածներ» պիէսի ներկայացման համար ընտրված է առանձին կօմիսիա գրագէտներից և նկարիչներից։

Բէժիսսեօր՝ տ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆ

ԱԶԴ.—Երկուշաբթի, փետրվարի 8-ին, առաջին անգամ կը ներկայացվի խմբի բէժիսսեօր Տիկ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ բենեֆիսին Շարլ Միրէի յայտնի պիէսան՝ «ՀԻԴՐԱ», թարգմանութիւն Վ. Փափազանի։ Այս պիէսի թարգմանութիւնը արժանացել է Դրամատիկական Ընկերութեան ժիւրիի առաջին մրցանակին։

(շ. կ.) (առ.) 84. 2—2

ԶԳԶԳՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Սկսվեցին Պետական Դումայի նստաշրջանի գործունէութեան երկրորդ մասի պարապմունքները։

Զմեռվայ սկզբում մենք յոյս ունէինք, որ Պետական Դումայի ներկայ նստաշրջանում հնարաւոր կը լինի քննութեան ենթարկել կովկասեան ծրագիրների մի նշանաւոր մասը։

Կարծիք կար, որ Պետական Դուման կը զբաղվի անդրկովկասեան տեղական ինքնավարութեան կամ զեմստվոյի կանոնադրութեան, դպրոցական սիստեմների, կալուածատիրական և այլ խնդիրների մշակութեամբ ու քննադատութեամբ։

Բայց, ինչպէս երևում է, անդրկովկասեան հարցեր կամ բողոքներ չեն նկատի առնվելու Պետական Դումայի ներկայ նստաշրջանում, կամ շատ սահմանափակ կերպով։

Պատրաստ ծրագիրների մի որոշ քանակ գոյութիւն ունի ներկայումս Պետերբուրգում. բայց կան և շատ խոշորները, որոնք դեռ չեն մշակվել լիակատար կերպով և չեն ներկայացվել բարձր շրջաններին։

Օրինակ, տեղական ինքնավարութեան կամ անդրկովկասեան զեմստվոյի խնդիրը թէև բաւական քննված ու լուսաբանված է, բայց նա չէ վերածված մի ընդհանուր ծրագրի, որը կարելի լինէր ներկայացնել օրէնսդրական մարմիններին։ Զանազան նահանգական քաղաքներում հրաւիրված խորհրդակցութիւնները առաջ են մղել իրանց հայեցակէտերը ինքնավարութեան կազմի մասին։ Եւ այդպէս՝ մենք ունենք Թիֆլիսի, Բութայիսի, Երևանի, Բաքուի, Գանձակի, Դաղստանի խորհրդակցութիւնների կարծիքները։ Ներկայումս այդ կարծիքները ուղարկված են Թիֆլիս վերջնական քննութեան և ընդհանուր զեմստվոյին ծրագրի մշակութեան համար։

Այդ գործը դեռ պէտք է կատարվի և անշուշտ նա շատ ժամանակ կը խլի, այնպէս որ հազիւ թէ հնարաւոր լինի նրան ենթարկել մանրամասն քննութեան և այնպէս մշակել վերջնական ծրագիրը, որ կարելի լինի ներկայացնել մինչև ամառ Պետական Դումային։

Նոյնը և զանազան ուրիշ խնդիրների վերաբերութեամբ։

Անշուշտ պետական նախահաշիվ քննութեան և հաստատութեան ժամանակ զուգընթացաբար կը վճռվեն մի քանի խնդիրներ, որոնք վերաբերում են Անդրկովկասին, բայց հազիւ թէ խոշոր ծրագիրները քննութեան ենթարկվեն անցողակի կերպով։

Մենք տարիներ շարունակ սպասում ենք բարեփոխութիւնների Անդրկովկասի վարչական, դատավարական, կրթական, տնտեսագիտական ասպարէզներում։ Սպասում ենք և մինչև այժմ չենք տեսնում նրանցից ոչ մէկը կեանքի մէջ իրագործված։

Մենք լաւ գիտենք, որ մեր հասարակական անտարբերութիւնը և մեր գանգատու վերաբերմունքը դէպի երկրի շահերը մեծ դեր են կատարում այն դանդաղ քայլուածքի մէջ, որով ընթանում են մեր գործերը, բայց ցաւալի է տեսնել, որ և ղեկավարող բարձր շրջանները բաւականաչափ գիտակից չեն այն բանին, որ բարեփոխութիւնների յապաղումը սպառնում է վերջնականապէս քայքայել երկրի տնտեսութիւնը և վտանգի ենթարկել ժողովրդի բարեկեցութիւնը։

Հասարակութիւնը, թմրած և քնած լինելով, չէ կարողանում իր հերթական կարիքների և պահանջների ձայնը լսելի դարձնել օրէնսդրական շրջանների համար և բաւականանում է թոյլ ու կցկտուր յայտնութիւններով, որոնք զուրկ են հեղինակութիւն վայելելուց։

Սակայն հասարակութեան բանիմաց, գիտակից մասը չէ կարող և չը պէտք է ընտելանայ նայել իր գործերի վրա զանգատու հայեացքով, թողնելով իրականութեան քմահաճոյքին դնելու կենսական հարցերը քննութեան պաղարէզի վրա, երբ հանգամանքները իրանք իրանց դասաւորվեն նպաստաւոր կերպով։

Խոշոր գործերը և պարտաւորութիւնները չեն կարող պատահականութեան առարկայ լինել, այլ նրանք պէտք է հանդէս մղվեն գիտակից վերաբերմունքով և ներգործական աջակցութեամբ։

Հասարակութեան մէջ գործող անձեր պէտք է հոգատար լինեն հանրային շահերի պաշտպանութեան գործը ապահովել քմահաճոյքից և դնել նրան որոշ ընթացքի մէջ։

Դա պարտաւորութիւն է, որը չը պէտք է վրիպի ուշադրութիւնից։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յարսկօէ-Սէլօ, 22 յունվարի

Ժամը 12 և 30 րոպէին Դանիայից վերադարձաւ Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնան։ (Հ. Գ.)

Պետերբուրգ, 22 յունվարի

Համառուսական նացիոնալ կլուբը, քննելով մի քանի ուսուցիչների յայտարարութիւնը այն մասին՝ թէ ինչպիսի քաղաքականութիւն են ունենալու ռուսները Ֆինլանդիայում, որոշեց խորին արհամարհանք յայտնել Ռուսաստանի ներքին գործերին միջամտելու առիթով։

Կլուբի յայտարարութեան մէջ մատնանշված է, որ արտասահմանեան ուսումնականները մի շարք խոշորագոյն սխալներ են գործում Ֆինլանդիայի իրաւական դրութեան վերաբերութեամբ։ Կլուբը վկայում է, որ համաձայն չէ այն վստահացումի հետ, իբր Ալէքսանդր I, գրաւելով Ֆինլանդիան, նրան ճանաչել է իբրև պետութիւն, իբր գրաւած Ֆինլանդիային միացնելու ժամանակ առնվեց նրա ազգաբնակութեան համաձայնութիւնը, իբր ռուսաց կառավարութեան այժմեան միջոցները հակումն ունեն կործանելու ֆինլանդական կուլտուրան։

Կլուբը կարծում է, որ յայտարարութիւնը ստորագրած արտասահմանեան ուսումնականները մոլորվել են այն գործիչներից, որոնք աշխատում են մի քանի փաստաթղթեր թագցնելով և միտները խեղաթիւրելով կատարել պատմական կեղծիք և ստեղծել չեղած իրաւունք։ Իրանց միջամտութեամբ յայտարարութիւնը ստորագրողները խախտում են միջազգային իրաւունքի և քաղաքավարութեան սովորութիւնները, ատուեր են ձգում այն բարեկամական յարաբերութիւնների վրա, որոնց պաշտպանութեանն է ձգտում կլուբը։

Ունենալով 1000-ամեայ պետականութիւն, ազգային, իրաւական կուլտուրա, իր իշխանութիւնը, իր օրէնքները, իր ժողովրդական գիտակցութիւնը, ռուսական պետութիւնը կարիք չէ զգում այլազգիների խորհուրդներին՝ պետական խնդիրները իրագործելու և ինչպիսի սկզբունքներով ղեկավարվելու մասին։

Ստորագրեց աւագ. խորհրդի նախագահ՝ (Հ. Գ.) Իշխան Վասիլչիկով

Վիէննա, 22 յունվարի

«Գօլ. Կօր.»-ը հաղորդում է, որ Միլիսանովիչը այցելեց կոմս Էրենտալին և վաղը վերադառնում է Բելգրադ։ (Հ. Գ.)

Վիէննա, 22 յունվարի

«Կօր. Բիւրօն» հաղորդում է. «Ռուսական լրագիրներից մինի հաղորդած տեղեկութիւնը Ֆրանց-Ֆէրդինանդի Պետերբուրգ գնալու մասին չէ համապատասխանում իրողութեանը»։ (Հ. Գ.)

Բերլին, 22 յունվարի

Մինխէնի ժուրնալիստները այլևս հաշիւ չեն տալիս պալատի նիստերի մասին։ Պրեզիդիումը դժգոհութիւն յայտնեց, որ ժուրնալիստները ցոյցով հեռացան դահլիճից։ (Հ. Գ.)

Վիէննա, 22 յունվարի

Գերմանացիները վերսկսեցին երկ ու տարի շարունակվող օբստրուկցիան։ Չեխերը հանգիստ մնացին։

Շաբի սէյմը անգործ է սլաւոնների օբստրուկցիայի պատճառով. Դալմացիայինը նոյնպէս անգործ է իրաւունքի խորվատական կուսակցութեան պատճառով, որ ստիպեց միւս պատգամաւորներին հեռանալ նիստից։ (Հ. Գ.)

Գանձակ, 22 յունվարի

Շուշում ոստիկանութեան պաշտօնեաները երևան հանեցին ռումբերի և պայթուցիկ նիւթերի պահեստ։ Ձերբակալված են 8 մարդ։ (Հ. Գ.)

Լօնդօն.—Ասում են, որ լօրդերը, երկրի վրա նպաստաւոր տպաւորութիւն թողնելու համար, փետրվարին կը սկսեն քննութեան առարկայ դարձնել վերին պալատի բէֆօրմի և անգործութիւնից ազատվելու բիլները։ Լօրդերը յանկարծ ծայրայեղ արժատականներ դարձան սոցիալական բարեկարգութիւնների հարցերում։

Ընտրվելու մնացել են միայն 7 պատգամաւորներ։ Ունիօնիստներ ընտրված են 271, կօալիցիան բաղկացած է 273 ազատամիտներից և 39 բանւորներից, նացիոնալիստներ ընտրված են 72 և բացի դրանից 8 անկախ իրլանդացիներ, որոնք հակառակ են բիւջէին։ («Р. В.»)

Բրիւսէլի «Petit Bleu» լրագրի Պարիզի թղթակիցը հաւատացնում է, որ նախագահ Ֆալիէր շուտով հրաժարական կը տայ։ Սենատի նախագահ Դիւբոսին և Կլեմանսոյին հանրապետութեան նախագահի թեկնածուներ են անուանում։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Բագու 22 յունվարի

Հաղորդում են, որ Բահիմ-խանը ընտանիքով և իր մարդկանցով անցաւ Ռուսաստանի սահմանը՝ Կարեազինի գաւառը։ (Հ. Գ.)

Կովկասի Փոխարքան Բահիմ խանից ստացաւ հեռագիր, որով վերջինս կոմսից խնդրում է թոյլ տալ իրան և իր 200 հոգուց բաղկացած ընտանիքին ապրել Ռուսաստանում։ Փոխարքան կարգադրեց Գանձակի նահանգապետի միջոցով թոյլատրել Բահիմ խանին և նրա ընտանիքին գնալ եկատերինոդար քաղաքը, բնաւ թոյլ չը տալով այլ ևս ապրել արտասահմանում։ Ընդսին կարգադրված է թոյլ չը տալ սահմանն անցնել նրա միւս կողմակիցներին։

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պոլիս.—Առ Յունաստանը յարաբերութիւնները սուր կերպարանք են առնում։ («Ճ.»)

—

Բերլին.—Լուր է պատում, թէ հովանաւորող-պետութիւնները մտադիր են վերստին գրաւել Կրետէն։ («Ճ.»)

—

Լոնդոն, 22 յունվարի

Բէյտէրի գործակալութեանը հաղորդում են Մալտայից. «Երեկոյեան դէմ պարզվեց, որ միայն մի յածանաւ գնում է Ֆալէր. Էսկադրայի մնացած մասը գնում է Պլատէա»։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 22 յունվարի

Հավասի գործակալութեանը հաղորդում են Աթէնքից, որ ներկայումս պարզվել է, որ ազգային ժողովը կը գումարվի 1910 թ. դեկտեմբերից ոչ շուտ։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պոլիս, 14 յունվար

Աստ՝ Ֆը... ան, որուն դատապարտութիւնը պիտի բանար մեր պատրիարքին ճամբան դէպի աթոռը, բողոքներու, խոստումներու, մեր վարչութեան դժուարութիւններու շնորհիւ, դատապարտուեցաւ չորս տարուան պաշտօնազրկութեան։ Անկէ հոգը՞։ Առ մի հարցնէք. եթէ ոչ կուսակալ, գոնէ կը կոչուի խորհրդական, կառավարիչ, ճիշդ Ադիլ-բէյի պէս, որ թէև ամբաստանուած Ադանայի դէպքերուն մեղադրատ մը իր պայմանական հեռագրովը թէ՝ «խնայեցէք օտարներուն և անոնց հաստատութեանցը», ներքին գործերու խորհրդականութենէն, հրապարակային ամբաստանութեանց շնորհիւ, բարձրացաւ Էպարքոսութեան խորհրդականի պատիւին։ Դաս մը եղաւ մեզի թէ՝ կառավարութիւնը, հակառակ մեր միամիտ ըմբռնումներուն և ժողովրդային հանրագրութեանց, որոնք իրարու ետև յաջորդեցին ուժ տալու հրաժարականի հացին, պէտք եղած կարեորութիւնը չպիտի տայ ու չը տուաւ. ու ինչ որ ցաւդ տեղի ունեցաւ,—անուշ խօսքեր, խոստումներ, պարզապէս քաղաքավարական ձևակերպութիւններ էին։

Իրերու այս ուղղութեանը մէջ, պատրիարքը հաւանաբար կը մնայ իր տունը։ Վարչութիւնը, իր ժողովներուն մէջ, այսօր կը գտնուի երկու հոսանքներու առջև. մէկ մասը կը խորհի պատրիարքը իր աթոռը դարձնել՝ պաշտօնի վրայ կանգնած բողոքին շարունակութիւնը ընելու. երկրորդ մաս մը կը պնդէ չբաւականանալ տրուած շատ չնչին բաւարարութիւններէն և նախապատիւ կը համարի, որ պատրիարքը շարունակէ մնալ իր տանը մէջ։

Թէ ինչ պիտի ըսէ ընդհ. ժողովը, յայտնի կըլլայ յառաջիկայ նիստին, ութ օր հոգը։

Պատրիարքարանի մէջ, կըսուի, կը տիրէ կատարեալ անիշխանութիւն. պաշտօնեաները, իրարու անհամաձայն, կունենան վէճեր, անհաճոյ շարժումներ։ Ստոյգ վկայութեանց նայելով, պատրիարքարանի մէջ երբէք գոյութիւն ունեցած չէ տիրող ողորմելի վիճակը։

Անդին հայ-կաթոլիկներու պատրիարքական գործերու վիճակը շփոթ դրութեան մէջ է։ Գոյունեան տեղապահը, ճիզուիտական բոլոր նենգութեամբ զինուած, ստրկամիտ գործիք մըն է Հռոմի ձեռքը, ու այնքան ջերմ, որ պապէն աւելի պապական է։ Ընդհ. ժողովը, բարեբաղդաբար մեծամասնութիւնը, իր ազատական ըմբռնումներովը կը ձգտի ժողովրդային իրաւունքի հաստատութեանը։ Գոյունեանը ըմբռնած է, որ ժամանակին հետ փոխուած են ըմբռնումներն ալ, ուստի, որ գուցէ յուսացած էր հլու հպատակներ գտնել իր տեղապահական տիտղոսին, իրեն դէմ ծառացած տեսաւ ժողովրդային իրաւունքը։

Ընդհ. ժողովը, ազատամիտ քանի մը հոգևորականներու հետ իրաւախոհ և համաձայն, որոշած է նախապէս մշակել ժողովրդային իրաւունքներու սահմանադրութիւն մը, réglement, ու վաւերացնել տալէ ետքը՝ ընտրել պատրիարքը։ Իսկ Գոյունեանը, իրեն գործակիցներովը, կը պնդէ նախ քուէարկել պատրիարքին ընտրութիւնն ու յետոյ սահմանադրութիւն մշակել ու վաւերացնել տալ։ Այս կարծիքները իրարու բաղխեցան վերջին ընդհ. ժողովին մէջ։ Գոյունեանը, արդէն իսկ գիտակ ժողովրդային ազատ տրամադրութեանց, որոնք զօրեղապէս տիրացած են ժողովականներու մէջ, մութ ճամբաներով յաջողած է ձեռք բերել հռոմէական պատգամ մը, որով կը սպառնայ «լուծել սինոդը, եթէ սահմանադրութենէն առաջ պատրիարքական ընտրութիւնը չկատարուի»։ Գոյունեան, որ կը կարծէր վերջին կայծակը արձակած ըլլալ՝ ժողովականները սարսափահար ընելու, ապշած մնաց պատգամաւորներու և ժողովրդային բուռն աղաղակներու մէջ, թէ «թող լուծուի սինոդը, թող լուծուի»։

Ազատական այս շարժումները մենք անշուշտ կը ծափահարենք, սրտի անհուն բերկրանքով ողջունելով, ազատամիտ աշխարհականներու հետ, երիտասարդ Մխիթարեաններ, որոնք ժողովին կը մասնակցին շատ թունդ և տաք ոգևորութեամբ, օրինակ՝ ատոնցմէ մէկը, Սահակ Տէր-Մովսէսեան, մշեցի երիտասարդ վարդապետ մը։ Իբրև նմոյշ յիշատակեմ իր սա քանի մը տողերը. «Բարեշրջում ըսուածը այնպիսի բան մըն է, որ կուգայ դուռը զարնելու որ բանան. իսկ եթէ չբանան՝ կը կոտրէ։ Արդէն մեր եկեղեցիները սկսած են պարպուիլ. ամենամեծ ոճներուն անդամ մարդ չկայ...»։

Գոյունեանը, զայրացած ու ընդվզելով, նկատած է. «Եթէ այսպէս շարունակէք խօսիլ, կը լուծեմ ժողովը»։

Նոյն բոպէին՝ ամէն կողմէ բողոքի աղաղակներ, աղմուկ.

«Դուք ոչ էք, որ լուծէք պատգամաւորական ժողովը. գացէք, այդ մասին ալ պատէն հրահանգ բերէք ու յետոյ եկէք»։

Ուրիշներ. «Մենք կը կարծէինք, որ ձիթենիի ճիւղով պիտի գաք, մինչդեռ սպառնալիքներ կը տեղաք»։ Ու Գոյունեան, ամօթահար, գլուխը կուրծքին վրայ կախ, դուրս կելլէ, ընդհանուր շփոթի մը մէջ։ Իր ետևէն ձայներ. «Կորսուէ, խառնակիչ...»։

Հայ-կաթոլիկ հանուրքին մէջ բոլորովին նոր է այս կեանքը, և բոլոր նշանները՝ բարեգուշակ։ Մեր թերթերը հետևեցան այս նոր կենդանութեան նշաններուն, և բնականաբար ունեցան իրենց բաբերաբերը, օրը օրին արձանագրելով կատարուած գործողութիւնները, նոյն իսկ մութին մէջ լարուած խաղերը։ Ցոյս ունինք, որ Ադանայի առաջնորդը՝ Թեզեան արքեպիսկոպոս՝ կուգայ բազմիլ Սակզ Աղաջիի պատրիարքական աթոռին վրայ՝ ազգային նոր կեանք մը բերելու այն հայ հանուրքին մէջ, որ, մեր քաղաքական կեանքի դժբաղդութենէն, ցաւդ Հռոմի տուաւ իր սրտին ամբողջութիւնը։

Ցոյներու պատրիարքարանը... ան ալ իր վրդովմունքները ունի. մակեդոնական բուլգարներու վէճերէն տակաւին գլուխը չազատած, հիմա ակամաս կըլլայ պատրիարքին ու սինոդականներուն վէճերուն։

Սինոդականները կը պնդեն, որ պ[illegible] քարանի վարչական օրէնքները պահուին. պատրիարքը, տեսնելով որ այս տարի, նոյն օրէնքներու տրամադրութեամբ, իրեն գործակից պիտի դան 3 միտրոպոլիտներ, որոնց հետ պատրիարքը վէճեր ունեցած է երբեմն, կը պնդէ զանցառութիւն մը ընել և օրէնքները ծռել իր տկարութեանը։ Ու մէկ բոպէի մը մէջ զայրացած, «փալասի կտոր» կոչած է այդ օրէնքները Այսօր յունական թերթերը, երկուքի բաժնուած, թեր ու դէմ կը գրեն։

Այսպէս՝ մեր պատրիարքանը, պատրիարքի բացակայութեանը երեսէն, ժամնուած անիշխանութեան. կաթոլիկ-հայերու պատրիարքարանը, Գոյունեանի մը երեսէն, ծփանքի մէջ է։ Ցոյներու պատրիարքարանի մէջ, սինոդն ու պատրիարքը, իրար դէմ զինուած. մէկը կը պնդէ օրէնքին ճշգրիտ գործադրութեանը վրայ, միւսը կուզէ ճմրթիլ զայն իր ձեռքին մէջ։

Այս ամէն շփոթութեանց մէջ Բ. Դուռն է որ կը ժպտի, տեսնելով թէ ինչպէս պատրիարքարանները գած են իրենց զբաղումները, առանց կարենալ աշխատելու ներքին կազմակերպութեանց։

Երկու պաշտօնատուն կայ, ուր խաղաղութիւն անվրդով է. հայ-բողոքականներու ազգապետարանն ու հրէաներու բարեկամապետարանը։ Հաւանական է, որ, շատ չանցած, ազգապետարանի մէջ ալ սկսին կեանքի նշաններ։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Երևան, 20 յունվարի

Նորերս հանգուցեալ Յ. ա.-ք. Մելքանի տեղը գրաւելու համար քաղաքիս քահանաներից մի քանիսը զանազան միջոցների են դիմում։ Այսպէս՝ դրանցից մէկը, թողած իր սեփական ծուխը, որ 24 տարի շարունակ հովել է, իր խնամի 2 վաճառականների միջոցով թուղթ է պատեցնել տալիս, որ իբր թէ «ժողովրդի կամքով» ցանկանում է քաղաքիս կենտրոն եկեղեցում հաստատվել։

Ցանկալի էր, որ նորեկ փոխ.-թեմակալը ուշադրութիւն դարձնի այդպիսի քահանաների անտեղի եռանդի վրա։ Միևնոյն ժամակ՝ ցանկալի էր, որ ս. Պետրոս-Պօղոս եկեղեցու ծխ. ընդհ. ժողովն իրան համար նոր քահանայացու ընտրէ, որովհետև, ինչպէս վերջերս էլ բացատրվեց, վախճանված քահանայի ծխականները չեն որ ընտրում են եկեղեցու համար նոր քահանայ, այլ այդ եկեղեցու բոլոր ծխ. ընդհ. ժողովը։

Թաթոս

—

Շուշի, 16 յունվարի

Ինչպէս յայտնի է, մեր թեմի առաջնորդը ներկայացրեց իր հրաժարականը։ Ղարաբաղը այսպիսի առաջնորդ տեսած չէր, և շատ սիրելի էր ժողովրդին, բայց առաջնորդի մի կողմին յարելը և ժողովրդին մեկուսի դարձնելը տեղի տուաւ սուր լարման, որից և սկիզբն առաւ հրաժարականի խնդիրը։

Այժմ ժողովուրդը պատրաստվում է նոր առաջնորդացու ընտրելու հոգ պատրաստելով։ Ամբողջ խօսակցութիւնը, մտքերը և կարծիքները կենտրոնացում են երեք ընտրելիների շուրջը՝ Կարապետ եպիսկոպոսի, Գարեգին և Բենիկ վարդապետների։ Պընդողներ կան, որ Կարապետ եպիսկոպոսը Շուշի չի գայ։ Գարեգին վարդապետն էլ ընտրվեց Գանձակում, բայց սա էլ հիւանդութեան պատճառով հրաժարվեց գնալ։ Մնում է միայն Բենիկ վարդապետ, բայց, ըստ իս, ընտրութիւն կայացնելիս պէտք է ընտրել երկու առաջնորդացու, որոնցից մէկը հաստատվում է, իսկ մէկն ընտրելուց՝ նրա հետ առաջարկված անձնափոխանորդը կարող է հաստատվել, որ ի հարկէ անհաճելի կը լինի ժողովրդին և ընտրողական բովից ոչ անցկացած մի այնպիսի անձ, որի անունը յիշելն անգամ ցաւ կը լինի։

Մեր մէջ պակասում է առաջնորդացուների ցանկ, հոգևորականների կենսագրականներ, նրանց գործունէութեան պատկերը կամ հակապատկերը և այլն։

Կարծում ենք, որ եթէ էջմիածինը հրատարակէր այդպիսի մի ցուցակ, լաւ կանէր, ի հարկէ մըշից հանելով նրանց անունները, որոնք արդէն մատնված են հնութեան գիրկը։

Որովհետև ընտրութեան ժամանակը մօտեցել է, նորանոր նեղութիւններից և ծախսերից խուսափելու համար, այս մասին ընտրված լիազօրները բարւօք կը լինի որ այժմեանից ընտրելիների հաճութիւնն առնէին և ապա ենթարկէին նրանց ընդհանուր քուէարկութեան, ապա թէ ոչ՝ ընտրելուց և նրանց հրաժարվելուց յետոյ նորանոր բարդութիւններ կարող են առաջ գալ։ օրինակ գանձակեցիների կատարած ընտրութիւնը։ Ղարաբաղի թեմը ընդարձակ է, այն ժամանակ դժուար կը լինի ծայրագաւառների պատգամաւորներին նորից Շուշի բերել տալը։ Ընտրութիւն պէտք է կատարել երկուսի համար։ **

ՄԱՐԻԱ ԻՎԱՆՕՎՆԱ ԴԷՄՈՒՐԻԱ

—

Յունվարի 21-ի առաւօտեան յանկարծամահ եղաւ Մ. Ի. Դէմուրիան, որը յայտնի էր վրացիների մէջ որպէս մէկը այն քէչերից, որոնք ամբողջ էութեամբ նուիրված են հասարակական գործին։

Հանգուցեալը 15 տարիների ընթացքում եղել է ամենաեռանդուն գործիչ, մասնակցելով հասարակական ընոյթ կրող իւրաքանչիւր գործի մէջ։

Նա եղել է և՛ գրող, և՛ բեմական, մասնաւոր ժողովրդական բեմին նուիրված գործիչ և մանկական գրականութեան տարածող. մի խօսքով չը կար մի գործ, ուր չը մասնակցէր Մարիա Իվանօվնան։

Նրա խմբագրութեամբ լոյս էր տեսնում մանկական «Նակադուլի» (Աղբիւր) հանդէսը, որը պատւաւոր տեղ ունի գրաւած վրացիների մէջ։

10—15 տարի սրանից առաջ, երբ չը կար վրաց ժողովրդական բեմ, չը կային այդ գործի համար աշխատող անձինք, հանգուցեալը ամեն ճիգ ու ջանք թափում էր այդ մեծ գործը գլուխ բերելու և շատ անգամ երբ խաղացող ոյժերը բացակայում էին, նա ինքը բեմ էր դուրս գալիս այլ և այլ դերերում։

Աչքի առաջ ունենալով վրաց ինքնուրոյն մանկական գրականութեան ապագային վիճակի մէջ գտնվելը, հանգուցեալ գործողը ոյժ էր տալիս թարգմանական գրականութեանը և դրանով խոշոր գործ կատարում այդ ասպարէզում։

Հանգուցեալը մօտ 50 տարեկան էր և, եթէ անժամանակ վրա չը հասնէր մահը, նա դեռ ևս շատ գործ պիտի կատարէր։ Շնորհիւ իր եռանդի և գործելու ընդունակութեան, հանգուցեալը սիրված էր հասարակութեան բոլոր խաւերում անխտիր։

Իր մահից յետոյ նա թողեց զաւակներ։

Հանգիստ աննկուն գործչի ոսկորներին և յարգանք նրա յիշատակին։

Ց. Գասպարեան

—

ժամանակին բոլորին ժողովվել այստեղ, և վտանգից մի քանի ժամ առաջ, կը փակենք նրանց այդ արկղի մէջ, մինչև որ Հալլէյն իր պոչը քաշի և հեռանայ մեր երկրից։

— Պարոն նախագահ, այդ արկղի մէջ միմիայն հայեր են լինելու թէ՞ ուրիշ ազգութեան մարդ էլ կարող է լինել. այս հարցը տալիս եմ նրա համար, որ իմ կինս ռուս է։

Նախագահ.—Միմիայն հայեր, պարոն, միմիայն հայեր. ահա տեսնում էք, որ կեանքում պատահում են դէպքեր, երբ օտարազգիի հետ միանալը բոլորովին անպատակայարմար է հային, և այս դէպքում ձեր ամուսինը պէտք է զոհ գնայ Հալլէյի պոչին։ Ապա գալիս է մի ուրիշ հարց՝ ինչ օգուտ էք տուել դուք հայոց ազգին, որ իրաւունք ունենաք այդ արկղի մէջ տեղ բռնելու։

— Օրինակ՝ ես, պ. նախագահ, մի քանի օր առաջ հայոց ուսումնարանների օգտին տուած ռուտին նուիրել եմ հինգ բուբլի,—գոռաց մի ինժենէր։

— Իսկ ես՝ տաս։

— Ես՝ քսան և հինգ։

— Ես էլ քսան և հինգ։

Նախագահ.—Պարոններ, դրանով դուք արկղի մէջ մտնել չէք կարող. դա շատ քիչ է. ձեզանից շատերը օրինակ, յարգելի պարոններ, կարող էին մէն-մենակ մի դրոշոց պահել, իսկ տուել են միմիայն 20—5-ական բուբլի. դա ամօթ է ձեզ։ Բայց թողնենք այդ հարցը. այժմ անուններ տուէք. ուզում էք ցանկանում, որ գնենք արկղի մէջ։

Մի ինժենէր.—Պ. նախագահ, ինչքան է նստելու ըստ նախահաշիւի այդ արկղը և ուզում էք յանձնելու նրա շինութիւնը։

Նախագահ.—Միութեանս շինարարական սեկցիան, քննելով արկղի շինութեան հարցը, գտաւ, որ նա կը նստի ոչ պակաս քան 100 հազար բուբլի։

Մի այլ ինժենէր.—Իմ կարծիքով, դա շատ է. ես կը շինեմ 10 հազարով պակաս։

Մի փողաթէչի.—Խնդրեմ տօրգեր նշանակէք. ով քանիսով շինի, ես խօսք եմ տալիս 15%-ով պակաս շինել։

Մի պարոն.—Պարոններ, կը խնդրէի ձեզ իմ անունը մտցնել արկղ մտնողների ցանկի մէջ. ճիշդ է, ես հայոց ազգի համար մեծ բաներ չեմ արել, բայց за то ունեմ հայ-լուսաւորչական մի կին, որի ձեռքին ահա տասներկու տարի է տանջվում եմ. ի սէր Աստուծոյ, ազատեցէք ինձ նրանից. այժմ Մատթէոս կաթողիկոսը հեշտութեամբ ապահարզան չէ տալիս, իսկ ես, նրան առնելով, հաւատացած էի, որ մեծ ազգասիրութիւն եմ անում. խնդրեմ ինձ մտցրէք հայ նահատակների շարքը և արկղում ինձ մի անկիւն շնորհէք։

Ձայներ.—Եւ մեզ, և մեզ. մենք էլ նոյն դրութեան մէջ ենք։

Մի կին.—Չեմ թողնի. ուր ես իմ ձեռքից փախչում։ Աստուած վկայ՝ ձեր արկղը կրակ կը տամ, օդը կը թռցնեմ։

Նախագահ.— Հանգստացէք, պարոններ, և դուք, տիկիններ. սա հասարակական գործ է. այստեղ վէճի ժամանակ չէ։ Խնդրեմ այժմ անուններ տաք. հայերից ուժը փըրկենք։

Տիրում է ընդհանուր լռութիւն։

Կ. Խատիսեան.—Պարոն նախագահ, խնդրում եմ գրէք իմ անունը. ահա չորս տասնամեակ է անցել, որ ես ամենայն ուժերով աշխատում եմ հայ ազգի մեջ լուսաւորութեան գաղափարներ տարածելու համար։ Ինչ դժուարութիւններ, ինչ հալածանքներ, ինչ զրպարտութիւններ չեն եղել իմ գլխին։ Ինչ ուրիշ ազգութեան մարդ էլ կարող է լինել. այս հարցը տալիս եմ նրա համար, որ իմ կինս ռուս է։

Նախագահ.—Միմիայն հայեր, պարոն, միմիայն հայեր. ահա տեսնում էք, որ կեանքում պատահում են դէպքեր, երբ օտարազգիի հետ միանալը բոլորովին անպատակայարմար է հային, և այս դէպքում ձեր ամուսինը պէտք է զոհ գնայ Հալլէյի պոչին։ Ապա գալիս է մի ուրիշ հարց՝ ինչ օգուտ էք տուել հայոց ազգին, որ իրաւունք ունենաք այդ արկղի մէջ տեղ բռնելու։

— Օրինակ՝ ես, պ. նախագահ, մի քանի օր առաջ հայոց ուսումնարանների օգտին տուած ռուտին նուիրել եմ հինգ բուբլի,—գոռաց մի ինժենէր։

— Իսկ ես՝ տաս։

— Ես՝ քսան և հինգ։

— Ես էլ քսան և հինգ։

Նախագահ.—Պարոններ, դրանով դուք արկղի մէջ մտնել չէք կարող. դա շատ քիչ է. ձեզանից շատերը օրինակ, յարգելի պարոններ, կարող էին մէն-մենակ մի դրոշոց պահել, իսկ տուել են միմիայն 20—5-ական բուբլի. դա ամօթ է ձեզ։ Բայց թողնենք այդ հարցը. այժմ անուններ տուէք. ուզում էք ցանկանում, որ գնենք արկղի մէջ։

Մի ինժենէր.—Պ. նախագահ, ինչքան է

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

(Հեռագրով)

Պետերբուրգ, 22 յունվարի

Նախագահում է Խոմեակովը։

Զեկուցանվում է սոցիալ-դեմոկրատների հարցաքննումը՝ ուղղված ներքին գործերի մինիստրին բանտորական կազմակերպութիւնները հալածելու և առանձին անդամներին հակալիցհօլական համագումարին մասնակցելու համար կալանաւորելու առթով։

Յայտնված է շտապողականութիւն։

Պրէդկալնը և Պոկրովսկին պաշտպանում են հեթթականութիւնը, մատնանշելով իշխանութեան տաղտրնի գործողութիւնների ակներև լինելուն վրա։ Պոկրովսկի 2-դը առաջարկում է հեթթականութիւնը մերժելու դէպքում հարցաքննումների մատնաժողովին տալ մի ամիս ժամանակ։

Քուէարկութեամբ շտապողականութիւնը մերժվում է, հեթթականութիւնը ընդունվում է։

Դուման ձեռնարկում է տեղական դատարանի օրինագծի քննութեան շարունակութեանը։ Հերթին 19-րդ յօդուածն է, որ զանազան տեսակի ցէնզ է որոշում հաշտարար դատաւոր ընտրելու համար—հասակի՝ 25 տարուց ոչ պակաս, ստացուածքային՝ այն նահանգում, ուր կատարվում են ընտրութիւնները, տիրապետութիւն 15,000 բուբլանց հողաբաժնի, քաղաքային ցէնզ՝ մայրաքաղաքներում՝ անշարժ կալք 15,000 ր. արժողութեան, 50,000 ազգաբնակութիւն ունեցող քաղաքներում՝ 6,000 ր., միւս քաղաքներում՝ 3000 ր., կրթական բարձրագոյն կամ միջնակարգ կրթութիւն, որով վերջին դէպքում պահանջվում է ծառայութիւն, որ տալիս է գործնական տեղեկութիւններ կամ համապատասխան քննութիւն։

Խօսելու են 38 հոգեւորներ։

Աշէմեանը մատնանշում է, որ ստացուածքային ցէնզը չէ երաշխաւորում դատաւորի անկախութիւնը, որովհետև վերջինիս արժանիքը պէտք է գնահատվի բարոյական յատկութիւններով. այդ պատճառով նա դէմ է ստացուածքային ցէնզին։

Պոկրովսկի 2-դը գտնում է, որ ցէնզը մտցված է ընտրողի կամքը սահմանափակելու համար։ Ցէնզով ուզում են կապել գիւղացիների դէմոկրատական մասսային (ծափ ձախից)։

Իշխ. Գոլիցինը հոկտեմբերեանների կողմից յայտնում է, որ ֆրակցիան մի փոքր ձևափոխում է իր ներկայացրած նախկին ուղղումները։ Ֆրակցիան ընդհանուր առմամբ կողմակից է ստացուածքային ցէնզին, սակայն, բացառութիւն անելով, հնարաւոր է գտնում արտօնել զեմստվոյին ժողովներին ընտրել ձայների $^3/_4$-ով և նրանց, որոնք չունեն այդ տեսակ ցէնզ։

Լեախնիցկին աշխատաւոր խմբակի կողմից աւելի կանոնաւոր է գտնում դատաւորի ընտրութիւնը կատարել տալ գաւառամասի ազգաբնակութեան ձեռքով, քան զեմստվոյին ժողովի, և դէմ է ստացուածքային ցէնզին։

Ռոդիչեվը կարծում է, որ ստացուածքային ցէնզը դասակարգային բնաւորութիւն կը տայ ապագայ հաշտարար ինստիտուտին։ Հեռագրը պաշտպան է կրթական ցէնզի։ (Ծափեր)։

Արդարադատութեան մինիստրը գտնում է, որ հարկ չը կայ խօսել դասակարգային շահերի մասին, որպիսին չը կայ քննվող օրինագծի մէջ։

Բէլոուսովը ասում է, որ աջակողմեանները դէմ են գնում գիւղացիների շահերին, պաշտպանելով ստացուածքային ցէնզը։

նստելու ըստ նախահաշիւի այդ արկղը և ուզում էք յանձնելու նրա շինութիւնը։

Նախագահ.—Միութեանս շինարարական սեկցիան, քննելով արկղի շինութեան հարցը, գտաւ, որ նա կը նստի ոչ պակաս քան 100 հազար բուբլի։

Մի այլ ինժենէր.—Իմ կարծիքով, դա շատ է. ես կը շինեմ 10 հազարով պակաս։

Մի փողաթէչի.—Խնդրեմ տօրգեր նշանակէք. ով քանիսով շինի, ես խօսք եմ տալիս 15%-ով պակաս շինել։

Մի պարոն.—Պարոններ, կը խնդրէի ձեզ իմ անունը մտցնել արկղ մտնողների ցանկի մէջ. ճիշդ է, ես հայոց ազգի համար մեծ բաներ չեմ արել, բայց за то ունեմ հայ-լուսաւորչական մի կին, որի ձեռքին ահա տասներկու տարի է տանջվում եմ. ի սէր Աստուծոյ, ազատեցէք ինձ նրանից. այժմ Մատթէոս կաթողիկոսը հեշտութեամբ ապահարզան չէ տալիս, իսկ ես, նրան առնելով, հաւատացած էի, որ մեծ ազգասիրութիւն եմ անում. խնդրեմ ինձ մտցրէք հայ նահատակների շարքը և արկղում ինձ մի անկիւն շնորհէք։

Ձայներ.—Եւ մեզ, և մեզ. մենք էլ նոյն դրութեան մէջ ենք։

Մի կին.—Չեմ թողնի. ուր ես իմ ձեռքից փախչում։ Աստուած վկայ՝ ձեր արկղը կրակ կը տամ, օդը կը թռցնեմ։

Նախագահ.— Հանգստացէք, պարոններ, և դուք, տիկիններ. սա հասարակական գործ է. այստեղ վէճի ժամանակ չէ։ Խնդրեմ այժմ անուններ տաք. հայերից ուժը փըրկենք։

Տիրում է ընդհանուր լռութիւն։

Կ. Խատիսեան.—Պարոն նախագահ, խնդրում եմ գրէք իմ անունը. ահա չորս տաս-

սրբեց քիթը, հազաց և շարունակեց.

«Բ. Հ. Կ. Մ., որ իր ծրագրի մէջ բոլորովին մոռացութեան էր տուել հայոց ազգին երկնքից սպառնացող վտանգները և ամեն ինչ այս աշխարհից էր սպասում, վերջերս իր բոլոր ճիւղերից, ենթաճիւղերից, արմատներից, դպրոցներից, կրեդիտային բանկերից, հիւանդանոցներից, դեղատներից և այլն և այլն ստանալով պոչաւոր աստղի մասին անհանգստացնող տեղեկութիւններ, վճռեց, որ հասել է ժամանակը հիմնել Միութեան կից նրա եօթներորդ սեկցիան՝ աստղաբաշխական անունով. սեկցիան արդէն տալել է իր բլանկներն ու դրքերը և երեք օր առաջ կազմակերպել իր վարչութիւնը։

«Ճիշդ է, վարչութեան մէջ դեռ ևս չը կան կանոնադրութեամբ նախատեսված բոլոր անդամները, և ես իմ անձիս մէջ կենտրոնացնում եմ և՛ նախագահ, և՛ փոխ-նախագահ, և՛ քարտուղար ու գանձապահ, բայց դա առաջ եկաւ նրանից, որ, կենդանի գործի ետևից ընկած, մենք անտես արինք ձևականութիւններ և իսկոյն գործի անցանք։

«Եւ ահա վարչութիւնս հրաւիրելով ձեզ՝ Բագուում ապրող բոլոր հայերիդ, առանց հասակի, սեռի, դիրքի, մտքի խորութեան, ցանկանում է իմանալ՝ ինչ էք մտածում դուք, ինչ միջոցներ էք առաջարկում փրկելու համար մեր ազգը վերահաս վտանգից»։

Ասաց նախագահը և նստեց։

— Խնդրեմ ինձ ձայն տուէք,—լսվեց դահլիճում մի ձայն։

Նախագահը ձայն տուեց նրան։

Մի ձայն.—Իսկ ինչ է մտածում ինքը՝ սեկցիայիդ աստղաբաշխական վարչութիւնը, ինչ միջոցներ է նա առաջարկում իր կողմից։

Նախագահ.—Վարչութիւնս ունեցաւ մի շարք ժողովներ և, երկար վիճաբանութիւններից յետոյ, միաձայն որոշեց՝ ա) ազգի հաշուով և նրա տուած միջոցներով շինել մի մեծ արկղ... յիսուն հոգու համար։

— Արկղ՞ղ...,—զարմացան բոլորը։

Նախագահ.—Այո, պարոններ և տիկիններ, մի մեծ արկղ։ Հարցը նրանումն է, որ բոլոր գիտնականներն այն կարծիքին են, որ աշխարհը աստղը, որի անունը ըստ ոմանց Հալլէյ է, իսկ ոմանց՝ սատանան գիտէ թէ ինչ, ահա այդ Հալլէյն իր պոչով մօտենում է մեզ, և այդ պոչը, պարոններ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ածխածին, այսինքն այն գազը, որը խեղդում է բոլոր կենդանի արարածներին. և ահա երբ նրա պոչը կը մօտենայ մեզ, մեր օդը կը լցվի ածխածնով և մենք մի քանի ժամվայ մէջ բոլորս կը մեռնենք... Եւ որպէսզի մենք բոլորս չը մեռնենք, վարչութիւնս որոշել է շինել մի այնպիսի արկղ, որը լցված լինի թթուածնով և նրա բոլոր ծակ ու ծուկերը ածխածնի համար բռնված. ահա այդ արկղի մէջ մենք ժողովելու ենք Բագուում ապրող հայոց ազգի բոլոր օգտակար անդամներին, ճիշդ այնպէս՝ ինչպէս Նոյը շինեց իր տապանը...

— Զոյգ-զոյգ, ինչպէս Նոյի տապանումն էր,—հարցրեց մի տիկին։

Նախագահ.—Ահա այդ հարցի մասին է, որ մենք ունենալու ենք այսօր մտքերի փոխանակութիւն, նաև այն, թէ ում ընդունենք այդ հակա-հալլէյական արկղի մէջ. կը կազմենք ցուցակ և կը հրաւիրենք իր

Նիստը ուշ լինելու պատճառով յետաձգվում է։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

✦ Մեզ հաղորդում են, որ Էջմիածնին իրաւունք է տրված վերցնել Սև-Ջուր գեղջի մինչև 65 բաշ ջուր ոռոգման համար։ Այդ ջրի մասին խնդիրը էր տուել Էջմիածինը գիւղավարիների համագումարին։ Խնդիրը յարգվել է և ստացել Փոխարքայի հաստատութիւնը։

✦ Այսօր, ժամը 1-ին, քաղաքային կրթական ընկերութեան դահլիճում կայանալու է այն մասնաժողովի նիստը, որը կազմված է համաձայն Հայոց Դրամ. Ընկ. վերջին արտակարգ ընդհանուր ժողովի որոշման, ձեռնարկելու այն միջոցներին, որով պէտք է ապահովվի հայ թատրոնի գոյութիւնը ապագայում նիւթական տեսակէտից՝ այսինքն ստեղծել ֆոնդ հայ բեմի ապահովութեան համար։ Վերոյիշեալ մասնաժողովի պատուաւոր նախագահն է ընդհանուր ժողովից միաձայն ընտրված Ա. Մանթաշեանը, իսկ անդամներն են՝ Ալիխանեան Կ., Սունդուկեան Գ., Քալանթար Ա., Աֆրիկեան Բ., Ղամբարեան Պ., Յարութիւնեան Ս., Մելեան Ա., Տէր-Մարգարեան Գ., Մանթաշեան Լ., Իւզբաշեան Դ., իշխ. Մ. Թումանեան, տ. Շ. Յովհաննիսեան, Զաքար Մ., Սարուխանեան Ա., Աբէլեան Ն., Լիսիցեան Ի.։

✦ Լոյս յունվարի 23-ի գիշերվանից ըստ կոպ տեղալ ձիւն, որ ծածկեց սպիտակ սաւանով Թիֆլիսի շրջակայքը։ Երէկ երեկ. դէմ ձիւնն ամբողջապէս հալված էր։

✦ Յունվարի 26, 27 և 28-ին «Ապոլլո» էլեքտրօ-թատրոնում ցոյց կը տրվեն հետաքրքրական պատկերներ հայկական կեանքից. 1) Մատթէոս II Կաթողիկոսի օծումը, 2) Զուարթնոց եկեղեցին, 3) Անիի աւերակները։

✦ Վանքի ս. եկեղեցու միաբանների գործի ուսիթով կարող ենք յայտնել, որ միաբան Գալուստ ք. Աբուլեան իբրև փոխ վերցրած գումարը արդէն վերադարձած է ունեցել իր ժամանակին։

✦ Ցիշեցնում ենք, որ վաղը, երկուշաբթի օր, հայ դրամատիքական խումբը Արտիստական թատրոնում առաջին անգամ կը ներկայացնէ Ա. Ահարոնեանի «Ուխտվածները» երեք գործ. նոր պիէսը, որ դրվելու է բեմի վրա առանձին հոգատարութեամբ գրագէտներից և նկարիչներից կազմված մասնաժողովի։ Այդ օրվայ ներկայացումը լինելու է շատ հետաքրքրական և գրաւելու է թատրոն մեծ բազմութիւն։ Ինչպէս յայտնի է, «Ուխտվածներ» պիէսը Ահարոնեանը գրել է ամենավերջին ամիսներում, գտնվելով շատ բացառիկ պայմանների մէջ։

✦ Այսօր Զուբալովի անուան ժողովրդական տանը հայկական սեկցիան կը ներկայացնէ Հալբէի «Հեղեղ» պիէսը։

✦ Այսօր, առաւօտեան ժամը 11-ին, Գիւղատնտեսական Վարկի դահլիճում տեղի կունենայ Վրաց Դրամատիքական Ընկերութեան ընդհանուր ժողովը. մի քանի ընթացիկ հարցեր քննութեան առնելու և նոր ընտրութիւններ կատարելու համար։

✦ Յունվարի 22-ին հոգեհանգիստ կատարվեց նորոգ հանգուցեալ Մ. Դէմուրիանի յիշատակին։ Ներկայ էին մասուլի, վրաց հասարակութիւնների, ազնվականութեան ներկայացուցիչներ և շատ ժողովուրդ։

✦ Այսօր տեղի կունենայ նորերս վախճանված վրաց հասարակական գործիչ Մ. Ի. Դէմուրիայի մարմնի յուղարկաւորութիւնը։ Զուղուրէթի ս. Նիկողայոս եկեղեցում կը մատուցվի ժամը 10-ին պատարագ, որտեղ էլ, ինչ հայոց ազգի համար ես տանջվում եմ. ես հիմնեցի այս Կուլտուրական Միութիւնը, որի շնորհիւ ապագայում պահպանվելու է հայոց ազգը. ես էի...

Ձայներ.—Ոչ, չը գրէք նրան, պ. նախագահ. նա մեզնից այնքան փոքր առաւ. այդ մենք էինք Միութեան պահողը. այ, տեսնում եք, երբ որ գալիս է փող տալու տեղ, նա հինգ ռուբլուց աւելի չէ տալիս։

Մի ձայն.—Պ. նախագահ, ես հայոց դպրոցի ուսուցիչ եմ, երեք ամիս է ռոճիկ չեմ ստանում և պարտքով եմ ապրում. ես այնքան տանջվել եմ, ես...

Մի ուրիշ ձայն.—Պ. նախագահ, դա սուտ է ասում. միշտ թղթախաղով էր պարապում և շաբաթական 36 դասից 14-ին չէր գալիս. իսկ ես, ես մինչև անգամ դասագիրք եմ կազմել. խնդրեմ ինձ մացնել ցուցակի մէջ։

Մի ձայն.—Խնդրում եմ ցուցակի մէջ մտցնել տիկիններ Իւզբաշեանին, Ադամեանին, Ա. Անտոնովային, Թումանեանին, Այվազեանին, Միրզաբէկեանին և ինձ. մենք միշտ էլ ժամանակել ենք յօգուտ հայ ազգի տրված բոլոր երեկոյթներին, զբաղանքներին և նրա այլ պէտքերին։

Մի շարք ամուսիններ.—Իսկ մենք. մենք ոչ ոնանք. մեզ ոչ ոնք էք թողնում. խեղդվենք այստեղ...

Նախագահ.—Պարոններ և տիկիններ. այսպէս չէ կարելի. այս ինչ աղմուկ է. ես ոչինչ չեմ լսում. խնդրում եմ ձեր կանդիդատներին առաջարկէք տոմսերով. ընտրութիւնը կանենք գաղտնի քուէարկութեամբ. դրէք 50 հոգու անուն։

Ձայներ.—Այո, այո, գաղտնի քուէարկութեամբ։

Նախագահը բաժանում է թերթիկներ. բոլորը, մի-մի մատիտ առած, սրա ու նրա երեսին են նայում և, իրար աչքով անելով, գրում են անուններ։

Նախագահը ժողովում է թերթիկները և, ընտրելով չորս մարդիկ՝ քուէները գրելու համար, բացում է թերթիկները և կարդում.

— Կոստանեան՝ մի ձայն. ուրիշ ոչ մէկ անուն. սա, պարոններ, չեղաւ. այստեղ պէտք է 50 անուն լինէր։

Կարդում է երկրորդը՝

— Բէգումեան՝ դարձեալ մի ձայն. սա էլ չեղաւ։

Այնուհետև բացելով և կարդալով բոլոր թերթիկները՝ ասում է.

— Դարձեալ մի ձայն. սա էլ չեղաւ. էլի մէկ ձայն. սա էլ չեղաւ...

Եւ այսպէս մինչև վերջ։

Ամբողջ ժողովում չէ գտնվում մի անձ, որը, իրանից բացի, ուրիշներ մի ուրիշ հայ փրկվէր Հալէբի պոչից։

Նախագահը զարմացած.

— Պարոններ, և այսպէս՝ այսօր մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ գոնէ Բագուում ոչ մի հայ փրկվելու արժանի չէ։ Ժողովը յայտարարում եմ փակված։

Ժողովականները ուրախ քրքիջով թողնում են դահլիճը։ Միայն, դուրս գալիս, մի ինժենէր ասում է իր ընկերոջը.

— Ափսոս որ արկղի հարցը գլուխ չեկաւ. ես իմ զավակում մեծ թով հին երկաթներ ունէի, և երդուում եմ, որ 20,000-ով եթէ շինէի, մէջը էլի 10,000 ռուբլի ինձ զուտ օգուտ կը մնար։ Սալ-Ման

զից դիակը կը տարվի ուղղափառների գերեզմանատունը։

✦ Կովկասեան օդագնացութեան խմբակի պրեզիդիումը բաղկացած է հետևեալ անձերից. Ս. Գոֆման—նախագահ, Վ. Ստրատոնով—նախագահի օգնական, Ն. Դաւիդովսկի—գանձապահ, Կոլիւբակին և Սամոյլով—քարտուղարներ։ Ի միջի այլոց խումբը մտադիր է Թիֆլիսում կազմել օդագնացութեան ցուցահանդէս, նոյնը և ծտիկ ապագայում Պետերբուրգում։

✦ Երէկ տեղի ունեցաւ քաղաքային վարչութեան և գումայական մնտեսական մասնաժողովի միացեալ նիստը՝ հացի, մսի և կառապանների սակագների հարցի համար։ Ինչպէս յայտնի է, վերջերս մասնաճառները և հացավաճառները շարունակ բողոքում էին, թէ այժմեան գները իրանց համար վնասակար են և խնդրում էին աւելացնել նրանց։ Միացեալ նիստը, մանրամասնօրէն ծանօթանալով իրերի դրութեան հետ, հնարաւոր գտաւ ոչխարի մսի ֆունտը 13 կոպէկից դարձնել 14 կ., տաւարի մսի ֆունտը 12-ից դարձնել 13 կ., խոզի միսը կաշով՝ 14—15 կոպէկ։ Հացի նկատմամբ որոշվեց թողնել դարձեալ անցեալ գինը երրորդ տեսակի համար (փռան հացի), այսինքն 3½ կ.։ Մնացած տեսակները նոյն գներով։ Կառապանների հարցը վճռվեց այսպէս. մի երթի (конецъ) համար —50 կոպէկ, երկուսի համար՝ 80 կ., իսկ երեքի համար՝ 1 ռուբլի։ Սակայն քաղ. վարչութիւնը իր կողմից մտադիր է մի երթի համար սահմանել ամենաբարձր գինը 40 կոպէկ։

✦ Յունվարի 22-ին 1-ին քաղաքամասի ոստիկանները և գիւղապահները շուրջկալի ժամանակ ձերբակալեցին 12 անդործ մարդկանց. 2-րդ քաղաքամասում ձերբակալվեցին 42 հոգի, 8-րդ քաղաքամասում՝ 23 հոգի։

✦ «Новая Рѣчь»-ում տպված է հետևեալ թղթակցութիւնը. «Բարթալինայում (Գորու գաւառ) կայ Դիմի գիւղը, որի բնակիչների կէսը հայեր են, որոնք ունեն իրանց եկեղեցին և իրանց քահանան։ Քահանայի և երէցփոխի միջև ծագել են թիւրիմացութիւններ և յունվ. 6-ին գիւղը իջեցրեց զանգակների լեզուակները և քահանային չը թողեց պատարագ մատուցանելու։ Քահանան մեղադրեց գիւղացիներին ապըստամբութեան մէջ և դանգատվեց իշխանութեան, որի հետևանքն եղաւ այն, որ մի քանի մարդ ձերբակալվեցին և բանտարկվեցին։ Գաւառապետ իշխ. Վախվախովը յունվ. 13-ին տեղում քննութիւն կատարեց, և ինչ երևաց. ոչ մի յեղափոխութիւն, ի հարկէ, չը կար. դա քահանայի մաքի ծնունդն էր, որին գիւղացիները գաւառապետի ներկայութեամբ բացատրեցին, որ նա վարում է անբարոյական կեանք և գայթակղեցնում է իր ծխականների կանանց։ Քահանան, երևում է, ժողովելիս է եղել կանանց և սկսել է նրանց հետ խաղալ «իծիլօ-բիծիլօ»։ Կանանցից որը այդ խաղի մէջ ընկնում է քահանային, նրան էլ պահանջում է։ Այս տեսակ է Դիմի գիւղացիների հոգևոր հայրը։ Հայ հասարակութիւնը պէտք է ուշադրութիւն դարձնէ դրա վրա և ազատէ գիւղացիներին այդ տեսակ խայտառակութիւններից»։

✦ Երէկվանից եղ. Նիկիտինների ցիրկում սկսվեց ֆրանսիական ըմբշամարտը, որին մասնակցում են հատաշխարհային ըմբիշներ։

✦ Պաշտօնական գործերով Թիֆլիս է եկել Բագուի քաղաքապետ գնդապետ Մարտինովը։

✦ Զանգեզուրի գաւառապետ Նշանակվեց Գիվօվարով, որ սկզբում վարում էր Բագուի 10-րդ քաղաքամասի պրիստաւի պաշտօնը։

✦ Դանձակի քաղ. դուման որոշել է կնքել 700,000 ռուբլու փոխառութիւն քաղաքի պարտքերը հատուցանելու և քաղաքային տուն կառուցանելու համար։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԼԷՄԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

(C. Lehmann-Haupt. Armenien einst und Jetzt. Berlin 1910)

Գերմանական գիտնական Կարլ Լէմանը, որ 12 տարի սրանից առաջ ճանապարհորդել էր Հայաստանում և ժողովել բազմաթիւ նիւթեր Հայաստանի և հայերի մասին, այժմ հրատարակել է իր ուսումնասիրութիւնների առաջին մասը մի մեծ հատորով։

Շուտով լոյս կը տեսնէ և երկրորդ հատորը։

Լէմանի աշխատութիւնը մի նոր գանձ է այն թանգարանի մէջ, որ նուիրված է հայկական ուսումնասիրութեան։

Գիտնական ճանապարհորդը ներկայ առաջին հատորում նկարագրում է իր ճանապարհորդութիւնները Անդրկովկասում, Պարսկաստանում և Թիւրքիայում։

Ուղևորութեան գիծը եղել է այսպէս. Վլադիկավկազից դէպի Թիֆլիս, ուսումնասիրութիւններ Թիֆլիսի շրջակայքում, ճանապարհորդութիւն դէպի Դանձակ, ուսումնասիրութիւններ Դանձակի և Գեռաբէկի շրջաններում, ուղևորութիւն Աղստաֆայից դէպի Սևանայ լիճը, Երևան, Զուլֆա, Թաւրիզ, Միանդուաբ, Ուրմի, Դիլման, ապա Վան, Բիթլիս, Բարիլ, Զեզիրէ, Տիգրանակերտ, Արաբկիր, Էգին, Կեմախ, ուսումնասիրութիւններ հնագիտական և կենցաղագրական բոլոր շրջաններում։

Ներկայ հատորը, որ բաղկացած է աւելի քան 550 մեծադիր երեսներից, պարունակում է իր մէջ 117 նկարներ և առանձին կցված Հայաստանի քարտէզը ճանապարհորդական ուղեգծով։

Աշխատութիւնը ունի մի գեղեցիկ կազմված ներածութիւն, որը 32 երեսի վրա տալիս է ամփոփ տեղեկութիւն Հայաստանի դիրքի, պատմութեան, հնագիտութեան, եղած ուսումնասիրութիւնների և հեղինակի կատարած գիտական խուզարկութիւնների մասին։

Այդ ներածութիւնը կարելի էր առանձին թարգմանել ընթերցանութեան համար։

Այնուհետև գալիս են 16 գլուխներ, բաժանված երկու գրքի։

Վերջումը զետեղված են ընդարձակ ծանօթութիւններ։

Առաջին չորս գլուխներում պատմված են ճանապարհորդի տպաւորութիւնները Անդրկովկասի շրջանում։ Ռազմավիրական ճանապարհը, Թիֆլիսը, Վրաստանը իրանց առանձնայատուկ գծերով, Դանձակի և Գեռաբէկի շրջանները իրանց ազգագրական և հնագիտական նիւթերով, Արարատեան աշխարհը իր հնագիտական հարստութեամբ հայթայթել են ուսումնասիրութեան մեծ պաշար ճանապարհորդին։

Իսկ այն դիտողութիւնները և հետախուզութիւնները, որոնք կատարվել են Պարսկական և Թիւրքական Հայաստանում, բաց են անում սակաւածանօթ և մինչև այժմ մթութեան վարագոյրով ծածկված տեղերի և իրերի պատկերներ մեր առաջ և լուսաբանում են անյայտ մնացած խորշեր Առաջաւոր Ասիայի անցեալ պատմութեան էջերից։

Համառօտ տեսութեան մէջ մենք անկարող ենք կանգ առնել բոլոր հետաքրքրական կէտերի վրա։ Եւ միայն կարող ենք յանձնարարել գերմաներէն գիտցողներին կարդալ ընագիրը, իսկ մեր ընթերցողներին՝ ունենալ առիթ ծանօթանալու Լէմանի աշխատութեան կարևոր մասերի հետ քաղուածական կամ թարգմանական յօդուածներից։

Որքան մեզ յայտնի է, Լէմանի գրքերից մի որոշ թիւ պէտք է շուտով լինի Թիֆլիսի գրավաճառների մօտ։

Ա. Քալանթար

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Յունվարի 22-ին վրաց թատրոնում խաղացվող «Յոր երթաս» պիէսը մեզ պատճառեց լիակատար գեղարուեստական բաւականութիւն, և չը նայած, որ մենք այդ պիէսը տեսել ենք բազմիցս, այնուամենայնիւ, ամենայն ուշադրութեամբ ունկնդրելով, եկանք այն համոզման, որ առանց յոգնելու կարելի է տեսնել նոյնիսկ մի քանի անգամ։ Մի քանի խօսք ասենք դերակատարների խաղի մասին։

Լադո Մեսխիի Պետրոնիլուսը կատարեալ arbiter elegantiarum էր։ Նրա խաղը այնքան գրաւել էր, որ մենք էլ ապրում ու զգում էինք նրա հետ։ Պետրոնիլուսի սիրուհու՝ Էվնիկէի դերը կատարում էր Թ. Գոգօլաշվիլի, որը առաջին անգամ դուրս գալով վրաց թատրոնի բեմի վրա՝ սկզբից և եթ իր վրա դարձրեց հասարակութեան ուշադրութիւնը։

Տիկնոջ խաղը մենք տեսել էինք մի քանի անգամ ժողովրդական թատրոնի բեմի վրա, որի մասին, որպէս բարեխիղճ բեմական աշխատաւորի, ունէինք միանգամայն նպաստաւոր կարծիք։ Իսկ այս անգամ նրա Էվնիկէն, կլասիկ կնոջ գրացիոզ շարժուձևերով, սիրող կնոջ բուռն սիրոյ յուզող տեսարաններով և առհասարակ իր ամբողջ խաղով կատարելապէս ապացուցեց, որ արժանի է կատարեալ խրախուսանքի ու արժանաւոր գնահատութեան։ Նա ամենալաւ տեղը կարող է գրաւել վրաց խմբի մէջ։ Գեղեվանովի Քիլօն Քիլօնէդէսը այն աստիճան բնական էր ու խորապէս ուսումնասիրված, որ աւելին պահանջել չէր կարելի։ Նրա խաղը մանաւանդ սկզբի տեսարաններում աւելի աջող էր։

Զարդալիշվիլի Մարկոսը, Մդիվանիի Լիդիան, Կ. Մեսխիի Ներօնը, Ավիմանիձէի Ուրսասը շատ նպաստաւոր տպաւորութիւն թողեցին մեզ վրա։ Միւսները խաղի ամբողջացմանը նպաստեցին։

Այսօր յայտնի դերասանուհի Նինա Զախիձէի մասնակցութեամբ կը խաղացվի Դիւմա-Որդու «Մարգարիտա Գոտիէ» պիէսը։ Ց. Գաս—եան

ՄԱՄՈՒԼ

«Սուլթանդակ» թերթը իր 58-րդ հաւարում սաստիկ պախարակում է Ժընեվի հայ ուսանողների և յայտնի «գործիչների» վարմունքը։ Այդ ուսանողութիւնը ստացել է 1000 ֆրանկի մի նպաստ, որ թիւրքաց այժմեան սուլթան Մուհամմէդ V-ը ուղարկել է, իմանալով որ հայ ուսանողութիւնը գտնվում է նեութական անճարակ վիճակի մէջ։ Իր երախտագիտութիւնը յայտնելու համար Ժընեվի հայ ուսանողութիւնը ուղարկել է շնորհակալական մի հեռագիր՝ յոտս կայսերական գահոյքի։

Սառնասրտութեամբ քննելով այս դէպքը պէտք է ասել, որ սուլթանի վարմունքը կարելի է միայն զովել, նոյնիսկ մի կողմ թողած այն նկատողութիւնը, թէ այդ նպաստը քաղաքական աստառ կարող է ուենալ և թեղդրված է «ժեսն թիւրքերից», շահելու համար յայտնի «գործիչների» սիրտը։ Բայց մենք միանգամայն արդարացի ենք գտնում «Սուլթանդակի» գայրոյթը և յանդիմանութիւնը այն ուսանողների և գործիչների հասցէին, որոնք, ինչպէս ճիշդ բնորոշում է թերթը, փոխում են իրանց համոզմունքները իրանց շապկի օսլայած վզնոցների նման։ Ժընեվի հայ ուսանողները և յայտնի գործիչները, որոնք սիրում են հաւատացնել, թէ իրանք արմատական հայեացքների տէր են, սոցիալիստներ են, որոնք շարունակ խօսում են միապետութեան դէմ, որոնք դատապարտում էին Կ. Պոլսի հայոց պատրիարքներին, թէ ինչու նրանք նպաստներ են ստանում սուլթաններից, յանկարծ այդ արմատականները, այդ սոցիալիստները, իբրև պարազիտներ, ցնծութեամբ ընդունում են իրանք նպաստներ։ Դուրս է գալիս, որ փողի համար մարդիկ կարող են ծախել ամեն բան՝ համոզմունք, հայեացք և այլն։

Ահա ամօթալին այդ է, որ ցոյց է տալիս, թէ որքան ընկնում են բարքերը, նոյնիսկ ուսանողութեան մէջ, երբ այդ ուսանողութիւնն ընկնում է յայտնի «գործիչների» աշխարհը։

*

Ստացանք, թէև ուշ, Կ. Պոլսում հրատարակվող «Стамбульскія Новости» պատկերազարդ ռուսերէն շաբաթաթերթը։ Այդ թերթի նպատակն է միջոց տալ ռուս հասարակութեանը՝ ճշգրիտ տեղեկութիւններ ունենալու Թիւրքիայի գործերի մասին, միևնոյն ժամանակ ծանօթացնել թիւրքական գրողների և գործիչների հետ։ Քննութեան առնելով և հայոց պատրիարքի հրաժարականի հարցը, թերթը այն միտքն է յայտնում, որ ոչ թէ եղբայրական զգացումների մասին բանաւոր խոստումներով, այլ միայն ազգու, արդար միջոցներով կարող է կառավարութիւնը վերահաստատել ամուր փոխադարձ մտաւորմանների և հայերի միջև։ Թերթը հաստատում է, որ հայերը լիակատար անկեղծութեամբ վերաբերվեցին նոր սահմանադրական ըէժիմին և իրանց կողմից ոչ մի միջոց չը խնայեցին այդ ըէժիմի հաստատութեան մասին։

*

Բերլինի «Local Anzeiger» թերթի յունվարի 13-ի համարում տպված է դոքտոր Զէմս Դրէնֆիլդի մի յօդուածը «Կանանց շարժումը իսլամական երկիրներում» վերնագրով։ Հեղինակը թաւրիզեցի հայ է, անգլիահպատակ և ունի հրատարակած մի կարևոր աշխատութիւն գերմաներէն՝ Պարսկաստանի մասին և, առհասարակ, ձեռնհասութիւն ունի պարսկական խնդիրների վերաբերմամբ։ Նա բազմակողմանի քննութեան է ենթարկել այն պատճառները, որոնք մինչև այսօր խոչընդոտ էին հանդիսանում կնոջ ազատագրութեանը մուսուլման երկիրներում, որ այժմ շարժումը յօգուտ իգական սեռի բարոյական և մտաւոր ազատագրութեան՝ սաստիկ աճում է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 15 յունվարի

Պարսկաստանի առաջին և մեծ աղէտը՝ բռնապետ Մէհմէդ Ալին գահընկէց եղաւ, նրա հետ կործանվեց և նախկին բռնապետութիւնը։ Մնում է երկրորդ և անաւոր աղէտը. դա յետադէմ հոգևորականութիւնն է, որ հետզհետէ իր շաքերն ստուարացնում է նոր ըէակցիոներներով խարխուլ գահը ամրապնդելու և իր նախկին դիրքը վերստանալու անուշ երազով։ Ներպատահականում և մասնաւորապէս Թաւրիզում հոգևորականութիւնը գլուխ է սկսում բարձրացնել, ատամներ է ցոյց տալիս սահմանադրականներին, որոնք նմանապէս, իրանց հերթին, նշմարելով մօտալուտ վտանգը, կազմակերպվում են, խտացնում են իրանց շարքերը, ինչ գնով ուզէ լինի, պայքարելու հոգևորականութեան դէմ՝ պահպանելու ժողովրդին այն բաց ուղին, որ առաջնորդելու է Պարսկաստանը դէպի քաղաքակրթութիւն։

Մահմեդականները տարվայ ընթացքում ունեն երկու ամիս, առաջինը Մուհարրէմն է՝ սգահանդէսների ամիսը, երկրորդը Բամազան ամիսն է՝ ծոմապահութեան օրեր, որոնցում մահմեդական ժողովուրդը լցում է թունդ կրօնական քարոզներ և հանդիսատես է լինում կրօնական ծիսակատարութիւնների։ Այդ նոյն ամիսներումն է, որ հոգևորականները արգաւանդ հող են ունենում իրանց կուրացնող և դիտուժաւոր սերմերը ցանելու տգէտ ամբոխի սրտում, այն խեղճ ու կրակ ամբոխի, որին տրամադրում են իբրև հզօր և անպատասխանատու զէնք կործանարար նպատակների համար։

Այս Մուհարրէմին հոգևորականները մզկիթներում քարոզում և անաթեմա էին տեղում այն մահմեդականների գլխին, որոնք «ֆրանկիմուաբ» կեանքի ու ձևերի են հետևում, ֆօկօլ են կրում, մազերը կտրած և գլուխները թրաշած չունեն, յաճախում են անհաւատ ֆրանկների ուսումնարանները և մահմեդական ուսումնարաններում օտար լեզուներ ու գիտութիւններ են սովորում և այլն։ Եղան և լինում են յաճախակի դէպքեր, երբ սպիտակ օձիք հագնողին բռնել և քարշ են տուել այս ու այն մզկիթի մօտ, օձիքը հանել, ստիպմամբ գլուխը ածիլել, մատը կտրել և այլն։ Զարմանալին այն է, որ ըէակցիոն հոգևորականութեան գլուխ են անցել երեսով սահմանադրական, ասառով ըէակցիոնէր անկումանը-այալաթի 8—10 կրօնական անդամները և երբեմի ջերմ սահմանադրական, բայց կարիէրիստ Սըգատը-Իսլամ ապդեցիկ մզկիթ։ Ինչպէս վերևում յայտնեցի արդէն, այս բոլորի դէմաց անտարբեր չէ բնաւ ապատսիտ երիտասարդութիւնը։ Ըէակցիոն հոգևորականների և հայրենասէր պարսիկների կամ, այսպէս ասած, հնի և նորի ընդհարումն անխուսափելի է ընդհանուր Պարսկաստանում։ Ընդհարումը Թաւրիզում տեղի կունենար գուցէ և այսօր, եթէ չը լիներ ռուսաց սուլթանների ներկայութիւնը։ Գիներալ նահանգապետ Մուխբիր-ուս-Սալթանէն շատ լաւ է տեսնում հէնց իր աչքի առաջ կատարված փաստը. ինչ օգուտ, որ մտավախ և անհամարձակ նահանգապետը ոչ մի դրական քայլ առնելու բիսկ չէ կարող անել, և այդ պատճառով իրաւամբ ենթարկվել է ձախակողմեանների դառն արհամարհանքին և դժգոհութեանը։

Պարսկաստանը գտնվում է հնի ու նորի ընդհարումների նախօրեակին, որին հանդիսատես կը լինենք մօտիկ ապագայում։

Ղարադաղից ստացված լուրերը նպաստաւոր են սահմանադրական մարտիկների համար։ Բահիմ-խանը, նախատեսելով իր կրելիք պարտութիւնը, հաշտութեան ձեռք է պարզում Եփրեմին և սարդար Բահատուրին, առաջարկելով բանակցութիւններ հաշտութեան պայմանների մասին։ Որպէս հաւաստիացնում են, սահմանադրականները անողոք են կռիւը շարունակելու իրանց մտադրութեան մէջ՝ ընդմիշտ նուաճելու Բահիմ-խանի զօրութիւնը և խստիւ պատժելու համար աշխարհաւեր բորենուն։

Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Օենսաը բացատրեց, որ օրէնքը իրաւունք չէ տալիս մասնաւոր մարդանց բողոքագիր ներկայացնել նահանգական ատեանների որոշումների դէմ դատական գործերի վերաբերութեամբ։

Հասարակական գործիչների կլուբի աւագների խորհուրդը որոշել հրատարակել հակաբողոք գերմանական պրոֆէսորների կոչի դէմ ռուս-ֆիննական յարաբերութիւնների մասին։

ՎՕՐՕՆԷԺ։ Նիժնէդէվիցկի գաւառի Նովսօլոտա գիւղում երեք զինված մարդիկ պահակների ղեկտով յափշտակեցին շինական վարչութիւնից 3070 ռուբլի։

ՁԵՐԿԱՍԿ։ Դուման որոշեց մացնել ընդհանուր ուսում։

ՎԱՐՇԱՎԱ։ Ձերբակալվեց Մօսկվայի ուկրայնեան արտէլի գանձապահի օգնականը մօտ 16,000 ռուբլի վատնելու համար։ Անայտացաւ արտէլի պարտատէրը, յափշտակելով մօտ 25,000 ռուբլի։

ՔԷՐՄԻՆԷ։ Պետերբուրգ մեկնեց բուխարական էմիրը։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Գիշերս շվէդական ժողովրդական կուսակցութիւնը ստացաւ 7320, երիտասարդ ֆիններից—11235, հին-ֆիններից—14432, սոցիալ-դեմոկրատներից—22841, ազգաբներից—2471 ձայն։ Յետագայում պարզվեց, որ սոց.-դեմ. ստացել են 27217 ձայն, հին-ֆիննական կուսակցու-

Թիւնը—17235, երիտ. ֆին. կուս.—12239, շվեդական ժող. կուս.—100,033, ազգարները—2701։

ԿԱԼԿԱԹԱ։ Օրէնսդրական խորհուրդը ընդունեց մասուլին վերաբերեալ օրէնքը, որի համաձայն նոր լոյս տեսնող լրագիրները գրաւական են ներկայացնում, որ գրաււում է յօգուտ գանձարանի՝ լրագիրը հակա-բրիտանական տեղեկութիւններ տարածելուն համար փակվելու դէպքում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինուորական մասնագէտ-բժիշկների
Երթևեկ հիւանդների համար
Զանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ։
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տելեֆոն № 481.
Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը $9^1/_2$-ից մինչև 5-ը ցերեկվայ։

ԱԽՎԼԵԹԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։
ԲՕԾՕՎՍԿԻՑ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։
ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.։
ԳԲԷՑՑ—աչքի հիւանդութիւն., ամեն օր՝ 2—3 ժ.։
ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—2 ժ.։
ԿԱԼԱՄԿԱՐՕՎ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի օրերից։
ՆՕՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և կէսը։
ՊԱՎԼՕՑԿԻՑ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.։
Ե. ՋՈՒԴՆՕՎՍԿԻՑ—ջղային, հոգեկան, էլեքտրոտերապիա երկուշ., չորեքշ., հինգշաբթի 4—5 ժ.։
ՏԷՏՐԱՋԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։
ԿԻՆ ԲԺ. ԻՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.։
ԱՍՊԻՍՕՎ—կոկորդի, քթի, ականջի հիւ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.։
ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻՑԿԱՑԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ $11^1/_2$—$12^1/_2$ ժ. ցեր.։
ՇԱՄԱՇ—խիրուրգ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.։
ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա.—սիֆիլիս, միդասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ $9^1/_2$—$10^1/_2$ ժ. առ.։
Համախորհուրդ, օպէրացիաներ, մասաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնոզ, ատնդուների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։
(կ.) 991. 100—17

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Հիւանդանոց
Մշտական մահճակալներով
Թիֆլիս, Միխայլովկի պր., Միքայէլեան հիւ. դիմաց, 59, տել. 1026
Հիւանդների ընդունելութիւն.
ՄԻՒ. ԱՂԱԶԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, դիզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւ.։
Ն. Ա. ԱԹԵՆԵԱՆՑ—ցեր. ժ. 1—2-ը, աչանջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ։
Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ—ցեր. ժ. 1—2-ը, վիրաբուժական հիւանդութիւններ։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, ջղային և ներքին հիւանդութիւններ։
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ։
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժ. $11^1/_2$—$12^1/_2$-ը, ներքին և երեխաների հիւանդութիւններ։
Ա. Դ. ԿԱՄԿԱՐՕՎՕ-ՎՆՈՒԿՕՎԱ—ցերեկ. 2—3 ժամը, կանանց հիւանդութիւններ։
Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասաժով և հիպնոզով։ Միկրոսկոպիական, բակտերիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ։ Ծաղկի պատուաստումն։ Ծծմայրերի քննութիւն։ Վճարը խորհրդի համար 50 կ.։ Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան։ Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից
(կ. ե. ու.) 236. 100—89

ՄԵԳԻՑԻՆԱՅԻ
ՖԵԼԴՇԵՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Բժիշկների որոշմամբ կատարում է կաշուի տակ պրոկումներ, լուացումներ (спринцов.), վերքի փաթաթումն, դեղերի քսումն (втираніе) և այլն։ Էլեֆտրականութիւն ըէվմատիզմի, պարալիչի, սեռական անկարողութեան և թուլութեան դէմ։ Մասսաժ էլեքտրական գործիքով և ձեռքով. մասնաւոր և ընդհանուր մասաժ։ Բժշկական մարմնամարզութիւն, ծաղկահատութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին ցոյց է տալիս մասնագէտ հմուտ բժիշկների։ Խորհուրդը 50 կոպ.։ Ընդունելութիւնը՝ կանանց—3—$3^1/_2$ ժ., տղամարդանց—$3^1/_2$—$4^1/_2$ ժ.։ Семеновская ул., № 9.
(կ. հ.) 77. 50—1

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Ցրիումֆ» շէվիօտի մի ամբողջ կտոր $4^1/_4$ արշ., տղամարդկանց
ԶԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ **2 Ր. 75 Կ.**
2ը նայած որ շատ էժան է, «ՑՐԻՈՒՄՖ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կտորների յատկութիւնը—միանգամայն ամուր է, գործնական և շքեղ։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շաղանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախքը 55 կոպ.։ Նոյնպէս ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ
ՊԻՋԱԿ 2 ՐՈՒԲԼՈՎ
տարվայ ամեն սեզօնին մաշելի։ Ճանապ. 55 կ.։
2 ՐՈՒԲԼՈՎ ԾԱԼՎԱՐ
ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված։ Ճանապարհածախքը 35 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախքը իմ հաշվին։ Պահանջները հասցէագրել.
г. Лодзь, № 72 н., фабриканту
ЗИГМУНТУ РОЗЕНТАЛЮ
Թղթակցութիւնները ռուսերէն։

(24 փ.4,13) (В. 2770) 41. 3—1

Հրաւէր
Կիրակի, ամսոյս 24-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Թանգոյեան ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխականների առաջին ընդհանուր ժողով։ Ժողովի զբաղմունքի առարկաներն են.
1) Հանգուցեալ երէցփոխի փոխարէն՝ նոր երէցփոխի ընտրութիւն։
2) Հաշուետուների ընտրութիւն։
3) Ընթացիկ հարցեր։
Այդ մասին յայտնելով՝ խնդրում եմ նոյն եկեղեցու չափահաս ծխականներին շնորհ բերել եկեղեցի՝ ժողովին մասնակցելու։
Գործակալ՝ Ղևոնդ ք. Մատիկոնեան
94. 1—1

Золотая медаль Лондонъ 1893 г.
ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКъ
ПРОВИЗОРА
Т. Ф. ЮРГЕНСЪ
БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО
ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ и ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.
БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
1 КУСОК 50 к. ½ КУС. 30 к.
Главн. складъ у Т. Ф. Юргенсъ, Москва
(М. 4375) 21. 24—1

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
1) Լիակատար հայ-ռուս բառարան, բաժանորդագինը 4 ր. և 5 ր.։ Տպագրութիւնը վերսկսվել եւ արագ տեմպով առաջ է գնում։
2) Լիակ. ռուս-հայ բառ. գինը 8 ր., կազմով 9 ր.։
3) Ռուսերէն այբբենարան եւ առաջին ընթերցարան հայերի համար. գինը 25 կ.։
Այսուհետև իմ գրքերը միմիայն ինձնից կարելի է ստանալ։ Զաւորներին գիջում կը լինի։ Հասցէս. Тифлисъ, Классическая 8. А. Дагбатяну.
(կ.) 93. 2—1

ԱՅԼԵՒՍ ՉԸ ԿԱՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ!!!
Եթէ Դուք խոսպէս կամենում էք բժշկվել սիֆիլիսից, տրիպպէրից, շանկէրից, բէլից, սեռակ. թուլութիւնից, չորքրից և կամ Ձեր առողջութիւնը քայքայված է օնանիզմից — պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան տղամարդ. և կանանց սեռակ. անդամների գաղտնի հիւանդութիւնների» անունով գիրքը, բաւականաչափ նկարներով և գեղատոմսերով, բաղկացած 250 էջից։ Գինը վերադիր գնարով և ճանապարհած. 1 ր. 50 կ.։ «Տղամարդական բժշկարան», ձեռնարկ առանց բժշկի օգնութեան բոլոր հիւանդութիւններից բժշկվելու համար, (բացի գաղտնի հիւանդութ.), մեծերի և երեխաների համար, բաւականաչափ դեղատոմսերով, էջ մօտ 250, գինը՝ վերադիր վճ. և ճանապարհած.—1 ր. 50 կ.։ Երկու գրքերը միասին—2 ր. 60 կ. (կարելի է նամակագրոշմով)։ «Նախապաշտ. բժշկարան անտանունների համար», էջ 135, գինը 1 ր. 25 կ.։ Միակ պահեստը. С.-Петербургъ, Офицерская, 50—224. Ф. Словаку.
(П. 7112) 69. 1—1

Լոյս տեսաւ և վաճառվում է «ԳՈՒՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում
ՇԱՐԹՈՒՆ ԲԱՆԱՏԻՆ ՅԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔՆ Ի Կ. ՊՕԼԻՍ
Լիակատար հատոր մեծ 1909 թ. մարտի 31-ի զինուորական ապստամբութեան, անկումն Աբդիւլ-Համիդ կայսեր և գահակալութիւն սուլթան Մէհմէդ Ե-ի։ Գիրքը պատկերազարդ է և կազմած։
Գինն է պօստի ծախքով 2 ր.։
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну.
(օ մ.) 79. 2—2

ՉԵՂԱԾ ՆՈՐՈՅԹ
3 Ր. 25 ԿՈՊԵԿՈՎ կանանց համար ձմերային պատրաստի շքեղագեղ՝ բրդէ գեղեցիկ և նորագոյն տրիկոյից, վերջին տարվով կարված, կոճակներով և մետաքսէ թելերով զարդարված, ամեն տեսակ մեծ գոյների. ուղարկվում է պօստով վերադիր վճ., առանց կանխավճ., հաշուելով ճանապարհածախք 55 կ.։ Երեք կանխավճ., հաշուելով ճանապարհածախք 55 կ.։ Երեք շքեղագեղ պահանջելուց՝ ճանապարհածախքը մեր հաշուին։ ԱՌԱՆՑ ՐԻՍԿԻ. եթէ չը հաւանվի՝ փողը վերադարձնում ենք։ Նոյն տեսակ շքեղագեղ ամենալաւ կտորից և գեղեցիկ արդուղաբդով—3 ր. 90 կ.։ Խրնդրում ենք ուղարկել երկարութեան և գօտու լայնութեան չափը՝ սանտիմետրով կամ թէ որքէ թելով։ Սիրիր հաշվում է 80 կ. աւելի։ Հասցէն՝ Фабрика А. КИВМАНА, ЛОДЗЬ № 43.
(կ.) (В.6529) 75. 3—1

ՊՕԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ Erankenhausen a/Kyffauser, ГЕРМАНІЯ
Ինժեներական բաժանմունք մեքենայաշին., էլեքտրոտեխ., գիւղատնտես., մեքենաների, կամուրջների կառուցմ. և ճարտարապետ.։ Ընդունվում են երկու սեռի անձերի, կամուրջների կառուցմ. և ճարտարապետ.։ Ընդունվում են երկու սեռի անձերի՝ 5—6 դաս. միջնակարգ կրթութեամբ։ Ծրագիրը 40 կոպէկ։
(П. 93692) (յուլ. 1, 12, օգ. 16., 1910 թ. յունվ. 10, 24., փետ. 7.) 156. 6—4

Վրաց Հրատարակչական Ընկերութեան
Ցինկոգրաֆիան
Ընդունում է ցինկոգր. կլիշէների պատուէրներ և պատրաստում է մաքուր և ճշգրիտ։
Թիֆլիս, Վանքի մեծ փողոց։

Հրաւէր
Յունվարի 24-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին, Հաւլաբարի ս. Կարապետ եկեղեցուն կից ուսումնարանում լինելու է ծխական ժողով։ Ուստի խնդրում եմ նոյն եկեղեցու յարգելի ծխականներին, 25 տարեկանից բարձր, շնորհ բերել նշանակված օրը ուսումնարանի դահլիճը։ Այս ժողովը երկրորդ ժողովն է։
Ժողովի զբաղմունքի առարկաներն են.
1) Եկեղեցու 1908 և 1909 թ.թ. մտից և ելից հաշիւների քննութիւնը։
2) 1910 թ-ի նախահաշիվ քննութիւնը։
3) Ընթացիկ հարցեր։
Երէցփոխ Սեդրակ Մառանջեանց
(շ. կ.) 87. 2—2

Հրաւէր
Ամսոյս 24-ին, կիրակի օրը՝ ժամը 12-ին, Կաթուղիկէ ս. Աստուածածին եկեղեցում (Էջդանի ս. Գէորգում) լինելու է ծխականների երրորդ և վերջին ժողով, ընտրելու հրաժարված երէցփոխի փոխարէն նորը, և մի հոգաբարձու, այլև վճռելու մի քանի հարցեր. ուստի սրանով հրաւիրում եմ երրորդ և վերջին անգամ պ. պ. ծխերին՝ յիշեալ օրը և ժամին ներկայ լինել եկեղեցում մասնակցելու ժողովին։
Գործակալ՝ Գրիգոր ա.-ք. Մանդակունի

2 ՐՈՒԲԼՈՎ ՊԻՋԱԿ
Այդպիսի չնչած էժան գնով ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական, և գեղ. պիջակ՝ տարվայ ամեն սեզօնին յարմար։ Նոյնպէս ուղարկ. եմ պատրաստի շալվարներ, կարված մօտաչին, գործնական և ամուր կտորից՝ 2 ր.։ Պիջակի կամ շալվարի ճանապարհած. 35 կ.։ 3 և աւելի առարկաներ տալուց՝ իմ հաշվին։ Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առ. կանխավճ., եթէ չը հաւանվի՝ փողը վերադարձնում ենք։ Ապրանքները հասցէագրել. фабрик. З. Г. РОЗЕНТАЛЮ, г. Лодзь, № 216.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (В. 2782) 44. 33—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
«ՏՂԱՄԱՐԴԻ ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ»
Զափահասների համար կարևոր և օգտակար գիրք. կազմեց մէդիցինայի ֆէլդշէր Ա. ԵՍԱՅԵԱՆ
Գինն է 30 կոպ.
Ծախվում է Թիֆլիսում «Գուտտենբերգ», «ՓԱՐՈՍ» գրավաճ. և հեղինակի մօտ՝ Թիֆլիս, Семеновская ул. № 9. Դուռմարով պահանջողները և գրավաճառները թող վաղօրօք բանակցեն գրաւոր կերպով գեղջի մասին։
(ա. օ.) 75. 5—4

Ի ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԳՐԱՄՄՕՖՕՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ԵՒ ՍԻՐՈՂՆԵՐԻ
Սօլօլակում, Սերգիևսկայա փողոցի վրա, Ազօվ-Դօնեան բանկի դիմաց
ԲԱՑՎԱԾ Է **ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ** ԵՒ **ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ** ՆՈՐ ՊԱՀԵՍՏ
ԳՐԻԳՈՐ ՍԵՐԳԷԵՎԻՉ ԴԱՒԻԴՕՎԻ
Ստացված են մեծ քանակութեամբ երկկողմ պլաստինկաներ
ՅԱՒԲ. **ԶՕՆՕՖՕՆ** և ԱԿՑԻՕՆ ԸՆԿ. **ԳՐԱՄՄՕՖՕՆ** գրող հրեշտ. մարկայով.
Ի տեղեկութիւն օտար քաղաքների գնողների.—ՊԱՀԵՍՏԻ մեծ քանակութիւն ունենալու պատճառով՝ պատուէրները կատարվում են առանց ուշացնելու։
(կ. հ.) 17. 5—5

ԲԱՑՎԱԾ Է 1910 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
V ՏԱՐԻ **ՀԱՍԿԵՐ** V ՏԱՐԻ
մանկական պատկերազարդ ամսագրի
Ամսագիրը լոյս է տեսնում 32—48 երես, մեծադիր գրքոյկներով, ընդարձակ ծրագրով
Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ և ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
1910 թ-ին «ՀԱՍԿԵՐԻ» ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐԸ լինելու են՝
2 դունատիպ հեքիաթ, 2 պատկերազարդ պատմուածք, 1 մանկական պիէս, 1 բնագիտական զրոյց, 1 համաշխարհային ժողովրդական ասանդութիւն, 3 վէպիկ, պատմուածք, երդիծաբանական զրոյց, 2 պրակ «Մանկավարժական գրադարան» ընտանեկան կրթութեան հարցերին նուիրված
Բաժանորդագինն է ճանապարհածախսով
Տարեկան . . . . . 4 ր. առանց յաւելուածների 3 ր.
Պարսկաստանում . . . . . 4 ր. 50 կ. . . . . 3 ր. 50 կ.
Արտասահմանում . . . . . 12 ֆր. . . . . 9 ֆր.
Սկզբից (1905 թ. սեպտ. մինչև 1910 վերջը) 16 ր. . . 12 ր. 50 կ.
Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25—(Тифлисъ, редакція журнала «АСКЕРЪ». Tiflis (Caucase), Rédaction du journ. «Hasker».
Խմբագիր-հրատարակիչ՝ Կ Ա Տ. Լ Ի Ս Ի Ց Ե Ա Ն
Թիֆլիսում կարելի է գրվել նաև «Գուտտենբերգ», Բաքուում «Сотрудникъ», Երևանում Պետրոս Յովհաննիսեանի, իսկ Վլադիկավկազում՝ Դէյկարխանեանի գրախանութներում։
1, 6, 10, 17, 24 1315. 10—10

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4,
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առև տր.կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comtoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թուանշանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսդիրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թուանշանութիւն համրիչի վրա, 7) Վաճառագրութիւն, արագագրութիւն (ամենապատ ձեռքի ուղղագիր). բ) ոչ պարտադիր. 1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) ողագրութիւն, 3) գակիլօգրաֆիա (բամինգտոն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գատ-գատ։ Ունկնդիրների թիւ շատութեան պատճառով բացվում է զուգընթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. 10—12 ժ. և եր. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 1387 20—18

Նորին Մեծութեան Պապսի մատակարար
НАСТОЯЩІЯ ШВЕЙНЫЯ МАШИНЫ ЗИНГЕРЪ
խանութի ցուցանակը հաստատված մինիստրութիւնից
1 ՐՈՒԲ. ՍԿՍԱԾ {ՎՃԱՐԸ ՄԱՍ-ՄԱՍ} 1 ՐՈՒԲ. ՍԿՍԱԾ
Զեռքի կարմիքենանները՝ 25 ռուբ. սկսած՝ ծախվում են Ռուսաստանում ամենուրեք, բացառապես սեփական խանութում։
Թիֆլիսում 3 սեփական բաժանմունքներ.
1) Գօլովինսկի պր., տ. Միրիմանովի, Փոխարքայի պալատի դիմացը.
2) Վօկզալնայա փող., տ. Էնֆիաճեանցի.
3) Հաւլաբար, Կախետինսկայա փող., տ. Հասան-Զալալեանի.
Զգուշացէք կեղծիքներից!
(կ.) 997. 20—18
THE SINGER MANFG. CO. TRADE MARK
Ֆաբրիկայի դրոշմը
Օգիլեր. ծնունդ. Լինդ. մատակարար

1897 թ.
„ՊՐՕՎՕԴՆԻԿ“
ФАБРИКА ПРОВОДНИКЪ РИГА
1888
ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀՐԻԳԱՅՈՒՄ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Սօլօլակսկայա փող., № 4
ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ՝
Բէզինի, կանեփի և ուրիշ թունոցներ ամեն ինչի համար.
Բէզինի տեխնիկական և էլեքտրո-տեխնիկական առարկաներ և լուսանկարչական պիտոյքներ.
Իրեղէններ եղջերեայ բէզինից և էբոնիտից.
Առանձնացնող և կաբէլային պիտոյքներ.
Խիրուրգիական և բժշկական բէզինի իրեղէններ.
Բէզինի խաղալիքներ և խաղաշնդակներ.
Բէզինի գալանտերէյնի ապրանքներ.
Ջնջող բէզին «Слонъ» մարկայով.
№ 1 1035. 0—7

Типографія „Экономія“ Большая Ванкская № 3.